Հ.Հ. Արմավիր մարզի
Վանանդի գյուղապետարանի 2011թ.
I-ին կիսամյակի հաշվետվությունը
համայնքի բնակիչներին 18.07.2011թ.
կայացրած ընդհանուր ժողովում

Համառոտ ծանոթություն առ 01.01.2011թ. դրությամբ

1. Տնտեսությունների թիվ --- 240
   Բնակչության թիվ --- 1050
   որից տղամարդ --- 545
   կին --- 505
2. Թոշակառուներ --- 75
3. Նպաստառուներ --- 23
4. Հայրենական պատերազմի մասնակիցներ --- 1
5. Դպրոցի երեխաներ --- 129
6. Ուսուցիչներ --- 21

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման » մասին օրենքով և Արմավիրի մարզպետարանի ամենօրյա օժանդակությամբ 2011թ.տնտեսական տարին սկսեցինք ավագանու կողմից ընդունված ծրագրերի համապատասխան:

Հաշվետու կիսամյակում կայացել է ավագանու 5 նիստ: Հիմնականում քննարկվել են 2011թ. համայնքի բյուջեի ընդունման, հաստատման և այն կատարելու հարցերը:

Ավագանու նիստերում քննարկվել են նաև գյուղի փողոցների բարեկարգման և սոցալական այլ ոլորտի հարցեր:

Գյուղապետի կողմից ընդունվել է համայնքին առնչվող 8 որոշում, 4 կարգադրություն:

Գյուղապետարանի և ավագանու ուշադրության կենտրոնում են եղել համայնքի բնակիչների կողմից բարձրացված հարցերը և Արմավիրի մարզպետարանի կողմից տրված հանձնարարականների կատարումը:

2011թ. ընթացքում գյուղապետարանը ստացել է տարբեր բնույթի դիմումներ, որոնց տրվել է սպառիչ և օրինական ընթացք: Արմավիրի մարզպետարանից և այլ կազմակերպությունների կողմից ստացվել են 54 տարբեր բնույթի պաշտոնական գրություններ: Նշված գրությունները օրինական կարգով մուտքագրվել են, և ժամանակին տրվել է օրինական ընթացք: Գյուղապետարանի կողմից տարբեր կազմակերպությունների է ուղարկվել 66 գրություններ: Բնակիչների պահանջով տրվել են տարբեր բնույթի 108 տեղեկանքներ:

Համայնքի հուզող և հրատապ հարցերից մեկը համայնքի միջնակարգ դպրոցի անմխիթար վիճակն է:

Գյուղապետարանը համայնքի ավագանու հետ միասին ուղերձով դիմեց Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամին Վանանդի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման խնդրանքով՝ երաշխավորելով ծրագրի ընդանուր արժեքի 5%-ի չափով ներդրում:

Ի ուրախություն բոլորիս, հիմնադրամը ուսումնասիրելով հարցի հրատապությունը, համաձյնել է հիմնանորոգել դպրոցի առաջին մասնաշենքը: Համայնքի միջեցներից կատարվել է ծրագրի 5%-ի ներդրումը, մրցույթի միջոցով ընտրվել է շինարարական կազմակերպությունը և 2011թ. հունվարի 11-ից սկսվել է հիմնանորոգման աշխատանքները: Մենք հույս ունենք, որ կկարողանանք Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի

հետ համատեղ հիմնանորոգել նաև դպրեցի եկրորդ մասնաշենքը: Դրանով հիմնովին կլուծվի նաև դպրոցի հարցի կարգավորումը:

Գյուղապետարանը համայնքի ավագանու հետ միասին ձեռնամուխ է եղել նաև Վանանդի միջնակարգ դպրոցին կից նախակրթարանի հիմնադրմանը, որի արդյունքում նախակրթարան կհաճախեն համայնքի 4 և 5 տարեկան մոտ 40 երեխաներ: Այդ ծրագրի իրականացման համար համայնքը կատարել է 3600000 դրամ ներդրում:

Մոտակա օրերին կսկսենք գյուղապետարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների նախապատրաստումը և համայնքի փողոցների բարեկարգման աշխատանքները:

Գյուղապետարանը համայնքի ավագանու հետ միասին, համայնքի բյուջեից, համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացրել է մեկ միլիոն երկու հարյուր հազար դրամի դրամական օգնություն՝ դրանով փորձելով թեթևացնել սոցիալապես անապահով ընտանիքների հոգսերը:

Մինչև օրս համայնքի սեփականատերերից 12-ը օգտվել են 07.04.2009թ «Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից և ազատվել են 1294000 դրամ ընդհանուր գումարով հաշվարկված տույժերից:

Նշված դրական աշխատանքների կողքին, գյուղապետարանը ունի նաև թերություններ: Մեծ աշխատանք պետք է կատարվի նաև փողոցների ասֆալտապատման, կանաչապատման, համայնքի մսուր-մանկապարտեզի վերակառուցման, ակումբի շինարարության գործում:

Իսկ այդ աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է նաև որ համայնքի բնակիչները ևս կատարեն իրենց պարտականությունները: Մինչև օրս կան շատ հողի սեփականատերեր և վարձակալներ, ովքեր չեն կատարել իրենց հարկային պարտականությունները: Ուստի օգտվելով առիթից կոչ եմ անում բոլոր ներկաներին, վճարել հողերի հարկերն ու վարձավճարները, որպեսզի գյուղապետարանը կարողանա ավելի շատ ծրագրեր կյանքի կոչի:

Հարգելի համագյուղացիներ Ձեզ եմ ներկայացնում համայնքի 2011թ. բյուջեի կատարման պլան- կատարողականը:

Արմավիրի մարզի Վանանդ համայնքի 2011թ. I-ին կիսամյակի բյուջեի եկամուտների կատարման հաշվետվություն

հազ.դրամ

N	Եկամուտի անվանումը	Պլան տարեկան	կատարողական	կատարման % տարեկան
1	Հողի հարկ	15795.8	8653.0	54.7 %
2	Գույքահարկ	1107.5	272.2	24.6 %
3	Վարձավճար	1500.0	452.6	30.2 %
4	Տեղ. տուրքեր	100.0	---	0 %
5	Տեղ. վճարներ	50.0	---	0 %
6	Այլ եկամուտներ	800.0	500.5	62.6 %
7	Դոտացիա	4346.5	2173.3	50 %
8	Պատվիրակված լիազորություններ	600.0	---	0 %
9	Հողի օտարումից մուտքեր	15680.7	5462.7	34.8 %
10	Տարեսկզբի ազատ մն. ֆոնդ. բյուջե	2169.3	2169.3	0 %
	Ընդամենը	42149.8	19683.6	61.2 %

Իհարկե այդ ցուցանիշները մարզի կտրվածքով դրական են, սակայն մեր համար գոհացուցիչ չեն, և ես հույս ունեմ որ 2011թ. տնտեսական տարում կանեք ամեն ինչ, որպեսզի և այս ցուցանիշները բարձրանան և նոր սոցիալական ծրագրեր իրականացվեն:

Վանանդ համայնքի ղեկավար՝ Ջ. Մանուկյան

Արմավիրի մարզի Վանանդ Համայնքի 2011թ. I-ին կիսամյակիբյուջեի ծախսերի կատարման հաշվետվություն

հազ. դրամ

Հ/Հ	Ծախսերի անվանումը	2011թ. պլան	Կատարողական	Կատարման % տարեկան
	Ընդամենը վարչական բյուջե	24299.7	9190.5	37.8 %
1	Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություն	19441.6	7990.5	41.1 %
2	Աղբահանություն	700.0	---	0 %
3	Ջրային տնտեսություն	200.0	---	0 %
4	Պատվիրակված լիազորություններ	600.0	---	0 %
5	Սոցիալական պաշտպանություն	1200.0	1200.0	100 %
6	Պահուստային ֆոնդ	2178.8	---	0 %
	Մշակույթ, սպորտ և կրոն	60.0	60.0	100 %
	Ֆոնդային բյուջե	17850.0	821.0	4.6 %
1	Կապիտալ շինարարություն	---	---	0 %
2	Նախագծային ծախսեր	525.0	---	0 %
3	Սարքեր և սարքավարումներ	5250.0	821.0	15.6 %
4	Կապիտալ նորոգումներ	12075.0	---	0 %
	Ընդամենաը ծախսեր	42149.8	10011.5	23.6 %

Վանանդ
համայնքի ղեկավար Ջ. Մանուկյան